ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՊԱՆԻ № 3 ՀԱՏՈՒԿ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
KAPAN SPECIAL
SHCOOL № 3

Թիվ 171 24 օգոստոս 2023թ

«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՏԱՇԵՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
Երևան, Հ. Հովհաննիսյան 24/7
ԷԼ. ՓՈՍՏ cowperwoodco@yandex.com

Հարգելի պարոն Մկրտչյան.

Համաձայն «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը ի (այսուհետ՝ Պատվիրատու) և և «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ -ի, (այսուհետ՝ Վաճառող) միջև «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ -ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 2022 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված թիվ ԿՀԿ-ԳՀԱՊՁԲ-23/1-01 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) 1.1 կետով սահմանված կարգով՝ «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ -ն պարտավոր էր մատակարարել Հավելված 1-ի N 2-26, 31, 32, 35-54, 56, 58-60 չափաբաժիններով սահմանված ապրանքները/սննդամթերք/ սահմանված ժամկետում և ծավալներով /2023 թվականի հունվարի 3-ից մինչև դեկտեմբերի 25-ը/:

«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ -ն, 2023 թվականի օգոստոսի 22-ին գրությամբ ծանուցել է «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ -ին ընկերության գործունեության դադարեցման մասին, ու հայտնել, որ հնարավոր չի լինելու ապրանքների մատակարարում իրականացնել:

Տեղեկացնում եմ, որ Ձեր կազմակերպության կողմից ապրանքների չմատակարարելն, հանգեցրել է Պայմանագրի էական պայմանների խախտման:

Հետևաբար, Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի լուծել Պայմանագիրը:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7 ենթակետի պահանջները՝ «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ -ը 2023 թվականի օգոստոսի 22-ից միակողմանի լուծում է 2023 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված թիվ ԿՀԿ-ԳՀԱՊՁԲ-23/1-01 ծածկագրով պայմանագիրը N 2-26, 31, 32, 35-54, 56, 58-60 չափաբաժինների մասով:

Միաժամանակ հայտնում ենք, որ Ընկերությունից կգանձվի նաև որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները համապատասխանաբար 1461449 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր քառասունինը) ՀՀ դրամի չափով և 974299 (ինը հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր իններսունինը) ՀՀ դրամի չափով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կատ.՝ Ժաննա Մղուլյան
Գնումների համակարգող